

# ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՓՈՒՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՊԱՇՏՏՈՆԱՊԵՍ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Լեոնեայ գեկուցումը, որ կը տրուի քարգմամբար, կատարուած էր Եւրաք օր, Յունիս 14ին, Համագգայիմ Հայագիտական Միութեամ տարեկամ նաշկերոյթիմ, Պաքսմի մէջ:

Շուրջ տասը տարիներէ ի վեր՝ Լոս Անճելոսի Դալիֆորնիոյ Համալսարանի Հայագիտական Ուսմանց Բաժինը մէկ մասը կազմած է Միջին Արեւելեան Լեզուներու Բաժանմունքին: Մինչեւ 1965 թուականը, Հայագիտական Ուսմանց Բաժինը կառավարուած է առժամեայ ուսուցչական կազմով: 1965 թուականին, երբ Տէրթ Աւետիս Սանճեան պաշտօնի կոչուեցաւ Հայագիտութեան բորֆեսորի ախոյոսով, Համալսարանիս մինչ այդ կատարած Համեստ ճիւղերը կարեւոր թափ մը ստացան եւ մեր Հաստատութիւնը դարձաւ մէկը Ամերիկայիս այն սակաւաթիւ բարձրագոյն կրթական Հաստատութիւններէն՝ որոնք սկսած են իրենց ըլլալ ուղարկութիւնը կեդրոնացնել Կովկասագիտական եւ Հնդկերոպական ուսմանց ընդարձակ բնազաւանդուն մէջ կարեւոր դիրք գրաւող Հայագիտական ուսմանց դարաշրջումին:

Յիշեալ բորֆեսորական նշանակումին բերումով — քայլ մը՝ որ մեր Համալսարանը առաւ առանց սպասելու Հայագիտական ուսմանց սասարելու նպատակով գործառնելիս Հիմնադրումին—, Միջին Արեւելեան Լեզուներու Բաժանմունքին մէջ մասուցուած է Հայագիտութեան բազմազան բնազաւանդները ներկայացնող Համապարփակ դասաւանդութիւններու ծրագիրը մը: Այս դասաւանդութիւնները ճնդգրկած են Հայերէն դրարար եւ աշխարհարար լեզուները՝ իւրաքանչիւրը բաժնուած երեք տարիներու վըրայ, Հայ գրականութեան պատմութիւն, Հայ պատմագիտական գրականութիւն, եւ յետ-աւարտական աստիճանի վըրայ գիտահետազոտական դասընթացք Հայերէն լեզ-

ուի եւ գրականութեան բնազաւանդներուն մէջ: Բացի այս ինը դասընթացքներէն, երկու դասեր եւ աւանդուած են Համալսարանի Պատմութեան Բաժանմունքին մէջ, այսինքն՝ Հայ իմացական գրականութեան պատմութիւն եւ Հայ ժողովուրդի պատմութիւն:

Բորֆ. Սանճեանէն զտա, Հայագիտական Բաժնի ուսուցչական կազմին մաս կազմած է Տոքթ. Ռիչըրտ Յովհաննիսեան՝ Հայոց պատմութեան այցելու բորֆեսորի Հանդամանքով, ինչպէս նաեւ իւրաքանչիւր տարի աւրթորայի թեկնածու աշակերտ մը պատասխանատու եղած է աշխարհարարի առաջին երկու տարիներու դասաւանդումին: Բաց աստի, 1965-1967 թուականներուն Համալսարանիս Միջին Արեւելեան Ուսմանց Կեդրոնին մէջ պաշտօնաւարած է Տոքթ. Ճօրճ Իվըն — այժմ Ուաշինկթընի Տըմպարթոն Օրս Հաստատութեան մէջ — Հայերէն լեզուով պոյութիւն ունեցող Հայկարանական գրականութեան բնազաւանդին մէջ ուսումնասիրութիւններ պատրաստելու նրպատակով:

Նախագահ Չարլզ Սանկի վերջերս կատարած պաշտօնական յայտարարութեան Համաձայն, 1969 թուականի սկստեմական շրջանէն սկստայ Համալսարանս կը թեւակոխէ նոր եւ բարեբաաստիկ Հանգրուան մը եւ կ'արձանագրէ հսկայաքաջ յառաջդիմութիւն մը Հայագիտական ուսմանց դարաշրջման ասպարէզին մէջ:

Իր յայտարարութեան մէջ Նախագահը պաշտօնապէս յայտարարեց Հետեւեալ միջոցառումները.

- 1. Հայագիտական Ուսմանց Ամբիոնի

մշտնջենական հաստատումը Միջին Արևելի-  
 կան Լեզուներու Բաժանմունքին մէջ: Ամբի-  
 ոսին վարիչ նշանակուած է Բրոֆ. Աե-  
 տիս Սանճեան, որուն ցարդ արձանագրած  
 ակադեմական եւ գիտական նուաճումները  
 արժանացած են Համալսարանին նախագա-  
 ռութեան եւ պաշտօնէութեան բարձր գնա-  
 հատանքին:

Ծ. Հայագիտական Ուսմանց գիտահետա-  
 զոտական կեդրոնի մը հաստատումը՝ իբրև  
 մէկ կարևոր օղակը Համալսարանին Միջին  
 Արևելիկան Ուսմանց նուիրուած աշխարհա-  
 շուկայ կեդրոնին:

Յ. Պատմութեան Բաժանմունքին մէջ մը-  
 նայուն պաշտօնի մը յաւելումը, որով ու-  
 սուցաձիպան անձնակազմին վրայ կ'ուելնայ  
 մասնագէտ մը՝ աւանդելու համար Հայ Ժո-  
 ղովուրդի պատմութեան վերաբերեալ դա-  
 սերը:

Կարևորութեամբ կը փափաքինք շեշ-  
 տել, որ իշխալ երկու բրոֆեսորական մը-  
 նայուն պաշտօններու հաստատումով, ինչ-  
 պէս նաև բացառիկ արժէք ներկայացնող  
 գրագարների մը ապահովումով, Լոս Անճե-  
 յոսի Գալիֆորնիոյ Համալսարանս իր նիւ-  
 թական միջոցներէն արամագրած է չուրջ  
 մէկ միլիոն տուրքի պատկանելի դումար  
 մը: Համոզուած ենք, որ այս նախաձեռնու-  
 թիւնք ինքնին կը հաստատէ այն իրողու-  
 թիւնք որ մեր Համալսարանը տաւած է գործ-  
 նական եւ խիստ կարևոր քայլ մը՝ ապահո-  
 վելու համար Հայագիտութեան զարգացու-  
 մը իբրև համահասարակ եւ անհրաժեշտ օ-  
 ղակ մը մեր Միջին Արևելեան մշակոյթնե-  
 րու համապարփակ ուսմանց շարքին:

Վերոյիշեալ միջոցառումներու քերու-  
 մով, Համալսարանին Հայագիտական Ու-  
 սմանց Ամբիոնը իր հաստատ անցը գրաւած  
 է ակադեմական երկու կարևոր բաժան-  
 մունքներուն մէջ: Ասոր իբրև արդիւնք, մեր  
 Համալսարանի աշակերտները հնարա-  
 ւարութիւն պիտի ունենան մասնագիտու-  
 թիւն ձեռք բերելու լեզուարանական, գրա-  
 կան, բանասիրական եւ պատմարանական  
 բնագաւառներուն մէջ: Յիշեալ բաժան-  
 մունքներուն մէջ հետզհետէ ծաւալող դա-

սերթացնելուն կողքին՝ յառաջ պիտի ըն-  
 թանայ նաև գիտահետազոտական աշխա-  
 տանքը, յատկապէս իրենց առջնորայի ու-  
 սումները աւարտած երիտասարդ գիտնա-  
 կաններու միջոցաւ: Համոզուած ենք, որ  
 այս կարգադրութիւններու հետեւանքով,  
 Լոս Անճեյոսի Գալիֆորնիոյ Համալսարա-  
 նի Հայագիտական Ամբիոնը պիտի հանդի-  
 սանայ կարևորագոյն եւ լուազոյն կերպով  
 կազմակերպուած կեդրոնը, ոչ միայն Ամ-  
 բիոնի մը այլ նաև Հայաստանէն դուրս որ-  
 եւէ երկրի մէջ: Հայագիտական Ուսմանց եւ  
 Ամբիոնի բոլոր աշխատութիւնները պիտի  
 ղեկավարուին Բրոֆ. Սանճեանի կողմէ:

Մանօթ է, որ վերջերս յաղոթութեամբ  
 աւարտեցաւ Համազգային Հայագիտական  
 Միութեան նախաձեռնութեամբ կազմա-  
 կերպուած հանգանակութեան արշաւը, ու-  
 բուն նպատակն էր զոչացնել 200,000 տուր-  
 քի հիմնադրամ մը՝ որ Համալսարանին տը-  
 բամարդելով պիտի աստարէք Հայագի-  
 տական ուսմանց մշտնջենական մշակումին:  
 Յիշեալ դումարին 150,000 տուրքը ապա-  
 հովուած ըլլալով, առաւելարար Գալիֆորնի-  
 յոյ Հայ դպրութի առաջաձեռն նուիրաբե-  
 րումին շնորհիւ, Համալսարանս իր պայ-  
 մանագրային խոտուածին համաձայն արդէն  
 պաշտօնադէս հաստատած է Հայագիտական  
 Ամբիոնը: Մեր արամագրութեան ասիկ զբա-  
 նուսդ հիմնադրամին տարեկան եկամուտը  
 պիտի յատկացուի ընդարձակելու համար  
 Հայագիտական դասաւանդութիւնները եւ  
 հետազոտական աշխատանքները, որոնք ի-  
 իրենց նպատակը պիտի բերեն Հայ մշակոյթի  
 լուազոյն գնահատումին եւ ճանաչումին:

Լիայոյս ենք որ Համալսարանին նախա-  
 գահութեան կատարած վերոյիշեալ կար-  
 գադրութիւնները հնարաւոր պիտի դարձնեն  
 հետեւեալ ծրագրերները:—

1. Կրթաթոշակներու բաշխում այն ա-  
 չակերտներուն՝ որոնք կը մշտին մասնագի-  
 տութիւն ձեռք բերել Հայագիտութեան բը-  
 նագաւառին մէջ:

Ծ. Յետ-առջնորայի հետազոտիչի պաշ-  
 տօններ, արամագրելի անոնց որոնք պիտի  
 զրաղին Հայ մշակոյթի եւ գրականութեան

Հետ տանչութիւն ունեցող մենագրութիւններ պատարաստելու աշխատանքով:

3) Հին եւ միջնադարեան Հայկական բուկղղբողիւրիներու, ինչպէս նաեւ Հայերէն լեզուով Հրատարակուած արժէքուար մեկնագրութիւններու անդլիերէն լեզուով թարգմանութիւններու պատարաստութիւն, որ պէտքի անոնք ժառոյշի ըլլան արեւմտեան աշխարհի գիտնականներուն եւ վերջապէս,

4. Հնարաւորութիւն ստեղծել որ Համալսարան ժամանեւ այցելու գիտնականներ եւ դասախօսներ, օրինակի համար լեզուաբաններ, Հնագէտներ եւ արուեստներու պատմութեան մարզին մէջ Հեղինակութիւններ: Այս այցելուներուն մասնագիտական դասաւանդութիւնները պիտի նպատակն շատ մը բաժանմունքներուն մէջ արձանագրուած աշակերտներու, որոնք առիթ պիտի ունենան ձեռք մտնելու շայն ժողովուրդի ծախսութեան ժառանգութեան: Մեր ծրագրին է այցելու գիտնականներ Հրատարակելու պիտի ակադեմիական Հաստատութիւններէն, եւ մասնաւորապէս Երևանի Հայկական ՍՍՀ Գիտութիւններու Ակադեմիային եւ Պետական Համալսարանին:

Մեր Հաստատութեան մէջ պաշտօնավարող գիտնականները իրենց արժանագրութեան տակ պիտի ունենան Հայագիտական գրադարանային ֆոնտ մը, որ մեր կարծիքով ամենէն ընդարձակ եւ ճոխ գանձարանն է բովանդակ Միացեալ Նահանգներուն մէջ: Համալսարանին գրադարանին փոքրիկ հասաքածոն, 1960 թուականին, անկի քան հազար Հատորի յաւելում մը ունեցաւ, չընորհիւ հանդուցեալ Տոքթ. Սանդամուրի անձնական գրադարանի նուիրատուութեան: 1966 թուականին՝ Բրոք. Սանճեան մասնաւոր առաքելութեամբ աշխուրհեցաւ Հայաստան, եւ մեր գրադարանին համար ապահովեց Ակադեմիայի, Երևանի Պետական Համալսարանի եւ այլ Հրատարակչութիւններու արժանագրելի Հրատարակչութիւններէն բազմաթիւ օրինակներ: Եւ վերջապէս, անցեալ տարի, Համալսարանս յաղողեցաւ օպահովելի շատ թանկարժէք անհասարակական գրադարան մը Հայերէն հնատիպ եւ

նորատիպ գիրքերու, ձեռագիրներու եւ արխիւային նիւթերու: Մեր կարծիքով, այս գրադարանը աշխարհի մէջ գտնուող նման Հասաքածոներուն մէջ հաւանաբար ամենէն ընդարձակն ու արժէքաւորն է: Երկնայ գրադարանին ապահովումը կը պարտինք Համալսարանի կարգ մը վարչական եւ ուսուցչական անձնակազմի բոլորանուէր հիւղերուն, քայք մանաւանդ Բրոք. Սանճեանին: Պէտք է գիտել որ, որ Համալսարանը այս հասաքածոն ձեռք բերաւ իր նիւթական միջոցներէն արժանագրելով պատկանելի գումար մը: Կր փափաքիմ այս արթիւ պաշտօնակէս մեր Հաստատութեան խորունկ շնորհակալութիւնը յայտնել Հ. Բ. Ն. Միւթեան նախագահ՝ Տիար Ալէք Մանուկեանին, որ 25,000 տոլարի առատաձեւն նուիրատուութեամբ նպաստեց գրադարանի գնումին:

Այս գրադարանը, որ աժմ մաս կը կազմէ Համալսարանին Հայկական հասաքածոյին, կը բովանդակէ ժողովուրդայէս 10,000 Հատոր գիրք, ձեռագիր եւ արխիւային վաւերագրութիւններ: Այս նիւթերուն մէջ գտնուող շուրջ 140 Հայերէն ձեռագիրները կը ներկայացնեն ամենէն բազմաճոխ հասաքածոն Միացեալ Նահանգներու թանգարաններու եւ գրադարաններու շարքին: Այս պարագան կը շնորհեք անոր համար որ ցարդ ամենէն ճոխ հասաքածոն կը գտնուէր Հարթֆըլդի Ատաւածարանական ձեռարանի գրադարանին մէջ, որ ունի 22 Հայերէն ձեռագիրներ: Արգարեալ այնքան բազմաբովանդակ է մեր ապահոված անհասարակական գրադարանը, որ մի քանի տարիներ պէտք է սպասել մինչեւ որ աւարտի նիւթերուն գիտական ցուցակագրումը, եւ այդպիսով յստակ գաղափար մը կազմուի անոր բովանդակութեան լրիւ տարգրութեան մասին:

Հուսկ ապա, պէտք է յիշենք մեր գրադարանային նիւթերուն մէջ գտնուող եւ եղակի արժէք ներկայացնող գանձ մը, արտինքն՝ 18րդ դարու առաջին յիսնամեակին փոքրինակուած եւ բազմաթիւ Հոյակարգ մանրանկարներ պարունակող ձեռագիր Աւետարանը, որ արգասիքն է միջնադարեան ե-

րեք գլխաւոր Հայ մտնրանկարիչներէն մէկուն, Թորոս Տարոնացիին: Գլածորի հրաշակաւոր վանքին մէջ գրուած եւ ծաղկուած այս ձեռագիրը, որուն նիւթական արժէքը 50,000 տալարէ աւելի կը գնահատուի, արտասահմանէն օպահովուած է իբրեւ նուէր եւ արտեղ բերուած եւ Համալսարանի նախագահին յանձնուած Քրոֆ. Սանճեանի ձեռքով:

Այս հակիրճ գեկուցումով փորձեցինք ներկայացնել այն բոլոր միջոցառումները որոնք Լոս Անճելոսի Գալիֆորնիոյ Համալսարանի նախագահութիւնը ի գործ դրած է յոգուած Հայագիտական ուսմանց մշակման եւ զարգացման: Այս կարգադրութիւնները կը

հաստատեն Համալսարանիս եռանդուն եւ գործնական «Ստեփաննի» Պատարելութեւ Հայ մշակոյթի ճանաչման եւ գնահատումին ակադեմական եւ դիտական բարձրագոյն գետնի վրայ: Լիայոյս ենք շահե սր հետզհետէ պիտի կարենանք առաւել եւս ընդարձակել մեր Հայագիտական Ամբիոնի ծրագիրները, եւ աարակոյս չունինք որ ամերիկահայ համայնքը պիտի շարունակէ զօրափոշ կանգնել մեր ճիգերուն իր նիւթական եւ բարոյական միջոցներով: Այսպիսով պիտի հասնինք մեր նպատակին՝ Լոս Անճելոսի Գալիֆորնիոյ Համալսարանը վերածել արտասահմանի ամենէն պատկառելի Հայագիտական ուսմանց կեդրոնին:

